

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ ՆՈՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՈՎ

06.10.2013 18:26



«Հանդիսավոր երգվում են ազնիվ և բարեխիղճ կատարել փաստաբանի պարտականությունները, պահպանել փաստաբանական գաղտնիքը, պաշտպանել վստահորդների իրավունքները, ազատությունները և շահերը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և փաստաբանի վարքագծի կանոնագրքով»:

Ահա այս խոսքերով հոկտեմբերի 6-ին «Փաստաբանական դպրոցի» 62 ուսնկնդիրներ երգվեցին Փաստաբանների պալատի խորհրդի առջև՝ դառնալով փաստաբան:

«Փաստաբանական դպրոցի» առաջին շրջանավարտների երգման և արտոնագրերի հանձնման արարողությունը սկսվեց Փաստաբանների պալատի խորհրդի նիստով, որտեղ խորհրդի բոլոր անդամները միաձայն որոշեցին՝ «հավակնորդների» արտոնագրեր ստանալու մասին դիմումները բավարարել և հավակնորդներին տրամադրել փաստաբանական գործունեության արտոնագրեր...»:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ առաջին անգամ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալիս փաստաբանը փաստաբանների պալատի խորհրդի առջև հանդիսավոր պայմաններում երգում է տալիս:

Արդեն փաստաբան-շրջանավարտներին ողջունեց և իր շնորհավորական խոսքն ուղղեց ՀՀ փաստաբանների պալատի նորընտիր նախագահ Արա Զոհրաբյանը. «Շնորհավորում եմ Ձեզ արտոնագիր ստանալու կապակցությամբ, դուք առողջ ուժ եք և կարծում եմ պալատը դեռ առիթներ կունենա ձեզնով հպարտանալու»:

Պալատի նախագահը հորդորեց նրանց հեռու մնալ հնարավոր բոլոր տեսակի կոռուպցիոն ռիսկերից՝ «պետք է կոտրել հասարակության այն կարծրատիպը, որ փաստաբանը միջնորդ է դատավորի և վստահորդի միջև: Փաստաբանը միջնորդ չէ: Դուք ևս, երբեք չներգրավվեք կոռուպցիոն գործարքների մեջ և չվերածվեք միջնորդի՝ Ձեր վստահորդի և դատարանի միջև, այլապես պալատի խորհրուդը և ես կսկսենք պայքարել նման փաստաբանների դեմ,-հավելեց Արա Զոհրաբյանը:

Շնորհավորեց և իր երախտիքի խոսքն ասաց նաև

Փաստաբանական դպրոց հիմնադրամի տնօրեն Նիկոլայ Բաղդասարյանը «Ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլորին, բոլոր այն մարդկանց, ովքեր կանգնած են եղել Փաստաբանական դպրոցի հիմնադրման ակունքներում և շարունակում են աջակցել նաև այսօր, դասախոսական ողջ կազմին և ունկնդիրներին»:

Ելույթի խոսքերից հետո փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը հավակնորդներին հանձնեց փաստաբանական գործունեության արտոնագրերը:

Այնուհետև, նոր և նախկին փաստաբանները շնորհավորեցին միմյանց:

ՀՀ Փաստաբանների պալատ


Կարինե Ղումաշյան

Հաջորդ նորությունը: ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ


Առաջարկվող նորություններ



17.09.2013 ՍԵՊՏԵՄԲԵՐ
ԱՄՍՎԱ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ



29.10.2013
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ
ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑՈՒՄ



30.09.2013 «ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ
ԱՐՎԵՍՏԸ» ԹԵՄԱՅՈՎ
ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ



30.09.2013 ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

```
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } }
```